



**Сделано в СССР.
Армения,
1950—1991**

Выставка оригиналов
диссертаций из фондов
Российской государственной
библиотеки

**Պատրաստված է
ԽՍՀՄ-ում:
Հայաստան,
1950—1991 թթ.**

Ռուսաստանի պետական
գրադարանի
հավաքածուների բնօրինակ
ատենախոսությունների
ցուցահանդես

Ռուսաստանի պետական գրադարանի և Հայաստանի ազգային գրադարանի համատեղ ջանքերով տպագրվել է «Պատրաստված է ԽՍՀՄ-ում: Հայաստան, 1950-1991թթ. Ռուսաստանի պետական գրադարանի հավաքածուների բնօրինակ ատենախոսությունների ցուցահանդես» պատկերազարդ կատալոգը: Այն երկլեզու է՝ հայերեն և ռուսերեն, նվիրված է ԽՍՀՄ-ում 1950-1991 թթ. հայ գիտնականների կողմից պաշտպանված ատենախոսություններին: Խնամքով ընտրված 85 թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները բացահայտում են երկրի պատմությունը և տնտեսական վիճակը, քաղաքաշինության զարգացման փուլերը, ինչպես նաև Հայաստանի մշակույթը: Հրատարակությունը մեզ տանում է հայ գիտնականների գիտական ձեռքբերումների զարմանահրաշ աշխարհ:

Աշխատանքի համակարգողներն են Ռուսաստանի պետական գրադարանի տնօրեն Վ. Գնեզդիլովը և Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տ. Զարգարյանը: Կատալոգը հրատարակվել է 2017 թ., Մոսկվայի «Պաշկով դոմ» հրատարակչության կողմից:

Խորին շնորհակալություն ենք հայտնում նախագծի բոլոր մասնակիցներին:

Հրատարակությունը նախատեսված է մասնագետների, գիտնականների, ինչպես նաև ԽՍՀՄ գիտության և մշակույթի պատմությամբ հետաքրքրվող հետազոտողների լայն շրջանակի համար: